

ՍՈՑ. ՓԱԹԵԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
№ BR

Ք. \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017թ.

\_\_\_\_\_ը, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և «Մարայուզ» ՍՊ ընկերությունը, այսուհետ՝ Կատարող, ի դեմս տնօրեն Ռ. Հովհաննիսյան,

մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրում նշված ծառայությունները, այսուհետ՝ Ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1. Ինչպիսի՞ ծառայություն է իրացվելու՝  Հյուրանոցային ծառայություն  Փաթեթ

2. Սույն պայմանագրով մատուցվող ծառայությունները ստանալու են (հյուրանոցային ծառայությունից կամ փաթեթից օգտվողի (ների) անուն ազգանունը) \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

(հյուրանոցային տնտեսության օբյեկտի անվանումը, գտնվելու վայրը)

4. « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017, ժամը \_\_\_\_\_ « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017, ժամը \_\_\_\_\_

5. « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017, ժամը \_\_\_\_\_ « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017 ժամը \_\_\_\_\_

( հյուրանոցային տնտեսության օբյեկտի մուտքագրման և ելքագրման ժամկետները)

(փաթեթի սկիզբը և ավարտը)

6. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / շշ դրամ

7. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / շշ դրամ

(հյուրանոցային ծառայության գինը)

(փաթեթի գինը)

8. \_\_\_\_\_

Այլ ծառայություններ (փաթեթի դեպքում նշել ի՞նչ է ներառում փաթեթը)

**2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները**

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով, պայմանավորված ժամկետներում՝ համաձայն Կատարողի կողմից սահմանված ընթացակարգի:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Իր մատուցած ծառայության համար ստանալ 3.1 կետում նշված գումարը:

2.2.2. Չմատուցել սույն պայմանագրում նշված ծառայությունները, եթե Պատվիրատուն չի փոխանցում 3.1 կետում նշված գումարը սույն պայմանագրի համապատասխան:

2.2.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարելու կամ սպառողի կողմից պայմանագրով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում՝ կիրառել տուգանք հետևյալ չափով՝

ա. պայմանագրի գնի մինչև քանիսիկ տոկոսի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ,

բ. պայմանագրի գնի մինչև հինսուս տոկոսի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված ժամկետի խաղտումամբ, կամ ընդանրապես չի օգտվել պայմանագրով նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի գրավոր ծանուցումը գրոսաշրջային օպերատորին սպառողի կողմից հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Պահպանել սույն պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները:

2.3.2. Հյուրանոցային օբյեկտում չխախտել հասարակական կարգը, պահպանել հիգիենային անվտանգության կանոնները, չվնասել գույքը և կատարել հյուրանոցային տնտեսության օբյեկտի ներքին կանոնակարգով սահմանված պահանջները:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված գրոսաշրջային համալիր ծառայությունները:

2.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ սույն պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

2.4.3. Կատարողի հետ փոխադրած համաձայնությամբ ավելացնել, պակասեցնել, փոփոխել սույն պայմանագրում նշված ծառայությունների ցանկը և դրանց կատարման ժամկետները:

2.4.4. Իր համար հասկանալի լեզվով Կատարողից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն գրոսաշրջային փաթեթի վերաբերյալ:

2.4.5. Պայմանագրի կնքումից հետո 48 ժամվա ընթացքում միակողմանի լուծել այն՝ անմիջապես գրավոր տեղյակ պահելով Կատարողին:

**3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը**

3.1. Սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների գինը կազմում է \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / շշ դրամ, որից հյուրանոցի մեկ գիշերակացի գումարը կազմում է \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / շշ դրամ: Սույն պայմանագիրը կնքելուց 7 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն փոխանցում է կանխավճար կամ ամբողջ գումարը: Սույն պայմանագրով Կատարողի համար պարտավորություններն առաջանում են կանխավճարի փոխանցումից հետո:

3.2. Պայմանագրի գինը պետք է վճարվի մինչև տվյալ տարվա ավարտը մնացած ամիսների ընթացքում՝ հավասարաչափ մարումներով, ընդ որում, բանկային հաշվեհամարին արդեն կուտակված ամբողջ գումարը, որպես կանխավճար, պետք է վճարվի Կատարողին սույն պայմանագիրը բանկին ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պայմանագրային գնի մնացած հերթական վճարումները, ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամսվա 15-ը, ընդ որում, եթե Պայմանագրի գինը գերազանցում է սոցիալական փաթեթով հստակացվող գումարի սահմանաչափը, ապա գերազանցող մասը Պատվիրատուն վճարում է սեփական միջոցներով:

3.3. Սույն պայմանագիրը ստորագրելով՝ Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը Կատարողի կողմից համապատասխան բանկ սույն պայմանագրի գնի ստացման պահանջագիր ներկայացնելու և բանկի կողմից Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվից անակցեցված ձևով սույն պայմանագրի գնի գանձման և Կատարողին փոխանցելու համար:

**4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1. Կատարողի օրենքին հակասող գործողություններով Պատվիրատուին հասցված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

**5. Անհաղթանարելի ուժի ազդեցությունը /Փոքր-մածոր/**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթանարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Վեճերի լուծման կարգը**

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ դատարանի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**7. Եզրամիակիչ դրույթներ**

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Հյուրանոցային, տրանսպորտային և այլ ծառայություններ կարող են մատուցվել այլ կազմակերպությունների կամ անձանց կողմից /ծառայությունների մատակարարներ/, որոնց հետ Կատարողն ունի համապատասխան պայմանագրեր:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 3/երեք/ օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

**Փոխանցման հաշիվ № BR**

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Մարայուզ» ՍՊԸ - ՀՎՀՀ 04111479,	(ԱԱՀ)
Հ/Հ 1930057363530100, “Կոնվերս բանկ ” ՓԲԸ	Աշխատանքի վայր, հասցե
Իրավ. հասցե՝ Տավուշի մարզ, ք. Դիլիջան Կալինինի 1 նրբ. 94 տուն	Անձնագրի սերիա, համար
Գործ. հասցե՝ ք. Երևան, Թումանյան փ., 2-րդ անցուղի, 5 շենք, բն.2/1	Երբ է տրվել, ում կողմից
Տնօրեն՝ Ռ. Հովհաննիսյան	Բանկ
Հեռախոս՝ (010) 60 50 90, (043) 60 50 90	Հասցե, հեռախոս
Ծառայության անվանումը՝ սոցիալական փաթեթով հանգստի կազմակերպում	Փոխանցման ենթակա գումարը

Կատարող՝ \_\_\_\_\_

Պատվիրատու՝ \_\_\_\_\_